

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՕԳՆԵՆՔ ՎԻՐԱԿՈՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

«Զի որ առնիցե զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր»:

Աւետ. Մարկ. Գ—55.

Քրիստոս ինքն է սովորեցրել մեզ, թէ որտեղ կան մարդասիրական ընդհանուր գաղափարներ, ընդհանուր լեւրաբերեալ օգնութեան և հոգացողութեան խնդիրներ, այդտեղ պէտք է ոչնչանայ իւրաքանչիւրիս անհատական հասկացողութիւնը մեր եղբօր, քրոջ և մօր մասին, ու իշխի մեր մէջ դէպի եղբայրը, քոյրը և մայրը ունեցած աւելի ընդհանուր մարդասիրական զգացմունքները: Քրիստոսի քարոզած այս վսեմ սկզբունքը պէտք է թագաւորի բոլորիս մէջ, որ մենք կարողանանք դուրս գալ եսասիրական և միայն մեր հարազատների մասին մտածելունեղ շրջանակից:

Երբ արդէն հրամայողական պահանջ կայ այս կամ այն համայնքը փրկելու վերահաս վտանգից—լինի այդ սով, կրակ, հեղեղ թէ վարակիչ հիւանդութիւն, այդտեղ պէտք է իւրաքանչիւրիս մէջ սովորական առօրեայ պարտքի զգացմունքը դէպի մեր հարազատները՝ տեղի տան աւելի լայն և ընդհանուրին օգնելու գիտակցութեան՝ բոլորի մէջ տեսնելով մեր հարազատ եղբօր, քրոջ և մօր ցաւն ու վիշտը ու այդ վշտերն ու ցաւերն ամոքելու պարտականութիւնը կատարելու ցանկութիւնը:

Ներկայ պատմական բոլորին, երբ մեր Մեծ Հայրենիքը վտանգուած է արտաքին թշնամիներից և մեր եղբայրները, առանց խտրութեան ազգի, գէնքն առած պաշտպանում են Մեծ Հայրենիքը՝ առիւծաբար կռուելով թշնամու դէմ, անշուշտ մենք բոլորս՝ իբրեւ հայր ու մայր, քոյր և եղբայր այդ զինուորներին, պէտք է մոռանանք մեր անհատական զգացմունքները և երկան բերենք մեր մէջ աւելի ընդհանուր զգացմունք, խնամելով մեր

բոլոր վիրաւոր զինուոր եղբայներին, և ամօքելով նրանց օգնութեան կարօտ ընտանիքների վշտերն ու ցաւերը:

Բոպէն լուրջ է և համայնական օգնութեան կարիքը մեծ:

Երբ Եւրոպայում պատմութեան մէջ չտեսնուած մի հսկայական պատերազմ է սկսուած և Մեծն Ռուսաստանի զաւակներն իրենց զէնքն առած դուրս են եկել պաշտպանելու հայրենիքը և հեռացնելու իրենց երկրից յանգուզն թշնամուն, այդ պարտականութիւններից ազատ եղողներս անշուշտ պէտք է լուրջ կերպով գիտակցենք մեր այլ սրբազան պարտականութիւնները և կազմակերպենք մեր վիրաւոր զինուորներին և տանը մնացած նրանց անօգնական ընտանիքներին օգնելու սուրբ գործը ամենալայն չափերով:

Ամբողջ Ռուսաստանում այժմ հետզհետէ կազմակերպում են վիրաւոր զինուորներին օգնելու քրիստոնէական վսեմ գործը: Պետութիւնը հսկայական ծախքեր ունի պնելու պատերազմը յաջողութեամբ տանելու համար, կարմիր Խաչի ընկերութիւնը կարիք ունի մեծամեծ գումարների իւր կարիքները հոգալու համար, պէտք է ուրեմն մենք բոլորս ընդառաջ ելնենք և իւրաքանչիւրս մեր կարողութեամբ նպաստենք և աջակցենք պատերազմի պատճառով հրապարակի վրայ եղած ծով կարիքներին:

Հայ ժողովրդի վիճակը ներկայումս գտնուում է պատմական ճգնաժամում:

Երկու թէ երեք ամիս առաջ «Հայկական հարցը» գտնուում էր որոշ յուսալի հողի վրայ: Տաճկահայը սպասում և պատրաստուում էր լցուած պայծառ յոյսերով դիմաւորել «Հայկական բարենորոգութիւններին»: Երբ յուսահատ և ան ու սարսափով լցուած Տաճկաստանի հայ գիւղերում իբրև «Մեծ աւետիք» իրար հաղորդում էին հայկական վիլայէթների համար նշանակուած երկու ընդհանուր քննիչներ՝ Հօֆի և Վեսթենեկի բարի գալուստը, երբ Հայոց Հայրապետն ուրախութեան արցունքներով լցուած շարունակ սպասում էր իւր պատկառելի

ներկայացուցիչ Վսեմ. Պօղոս-Նուպար փաշայից նորանոր
ուրախ տեղեկութիւններ չէին հայկական հարցի մասին,
դժբախտաբար այս բոլոր յոյսերն իրենց գարնանամուտ
բուրմունքով կարծես հայկական հորիզոնում չքացին և անեղ
պատերազմից գոյացած թանձր և սև սև ամպերը բոլորո-
վին ծածկեցին առայժմ հայի պայծառ յոյսերի արևելքը:

Իհնչ խօսք, որ հայերիս բախար ներկայումս սերտ
կերպով կապուած է մեր ընդհանուր հայրենիք Մեծն
Ռուսաստանի ներկայ եւրոպական պատերազմում ունե-
ցած յաջողութեան հետ: Ահա և այդ յաջողութեանն է՝ որ
ամեն կերպ հայերս պէտք է նպաստենք:

Ազգիս Վեհափառ Տ. Տ. Գէորգ Ե. կաթողիկոսը
պատերազմի սկզբում յայտնի շրջաբերական կոնդակով
իւր Հայրապետական հեղինակաւոր խօսքն ուղղեց հայ
ժողովրդին՝ հրաւիրելով օգնել ամեն կերպ Մեծն Ռու-
սաստանի փառապանծ յաղթութեան: Ուրախալի է տես-
նել՝ որ ամեն տեղ հայ ժողովրդի զաւակները զիտակեց-
նով պատմական ընդունակ լրջութիւնը մեծ ոգևորութեամբ
ցոյց են տալիս իրենց սրտեռանդն զործունէութիւնը, և
Հայոց Հայրապետի հեղինակաւոր խօսքը՝ օգնել պատերազ-
մի դաշտում վիրաւորուած զինուորներին և նոցա օգնու-
թեան կարօտ ընտանիքներին՝ արձագանք է գտնում շատ
կողմերում: Արդէն Պետրոգրադի և Մոսկուայի հայ եկե-
ղեցական համայնքը, նոյնպէս և Նոր-Նախիջևանի, Բա-
գուի, Թիֆլիսի և մի քանի այլ քաղաքների հայ բարե-
գործական հաստատութիւններն որոշել են իրենց հաշուով
ունենալ հիւանդանոցներ՝ որոշ թուով մահճակալներ պա-
հելով: Միւս կողմից հայ հարուստները յատուկ ընկերու-
թիւններին նպաստում են իրենց միջոցներով օգնելու
պատերազմ զնացած զինուորների օգնութեան կարօտ
ընտանիքներին: Սակայն այս բոլորը քիչ է և որոշ կազ-
մակերպած հողի վրայ դեռ չէ դրուած:

Ծով կարիքներն անեղ պատերազմի պատճառով
հետզհետէ տարածւում է ամեն տեղ: Թերթերը մեզ հա-
ղորդում են՝ որ համարեա իւրաքանչիւր օր վիրաւոր

զինուորներ են վերադառնում պատերազմի դաշտից: Բնականաբար այդպիսիների թիւը հետզհետէ կըշատանայ, քանի զեռ կշարունակուի պատերազմը:

Հայ ազգը առանձնապէս պատմական մեծ պարտք ունի ներկայ ծով կարիքների դիմաց: Ռուսաստանի հայութիւնը մեծ չափերով պէտք է օգնութիւն ցոյց տայ որոշ կազմակերպուած ձևով:

Մեր պարբերական թերթերը շատ իրաւացի կերպով առաջ են բերել այն կարևոր հարցը, թէ պէտք է հայերիս օգնութեան գործը ունենայ համազգային կազմակերպութիւն ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի հովանու ներքոյ: Եւ իրօք, տարբեր ընկերութիւնների և անհատների օգնութիւնը և մասնակցութիւնը կըստանայ անհատական գոյն, անհրաժեշտ է՝ հայկական հիմնարկութիւնների և կարևոր քաղաքների հայկական համայնքների օգնութեան գործը կազմակերպուի Վեհափառ Կաթողիկոսի հովանու ներքոյ և այդ կազմակերպուած օգնութեան սուրբ գործը իւր ընդարձակ ծաւալով աչքի ընկնի և զնահատութեան արժանանայ Ռուսաց պետութեան և ժողովրդի կողմից:

Թող ուրեմն ներկայ պատմական ըոպէին իւրաքանչիւր հայի մէջ զարթնի մարդասիրական մեծ ոգին՝ և ամեն մէկը շտապի իւր լուծման յանձնել յօգուտ վիրաւոր զինուորներին ու նրանց ընտանիքներին օգնելու սուրբ գործի: Թող բոլորիս մէջ առաջ գայ քրիստոնէական այն լուսաւոր գիտակցութիւնը՝ որ պատերազմի դաշտում թշնամու գէմ կռուող զինուորները մեր հարազատ եղբայրներն են, իսկ այդ զինուորների օգնութեան կարօտ հարազատներն են մեր մայրերը ու քոյրերը:

Այժմ աւելի քան ժամանակն է՝ որ իւրաքանչիւր հայ գիտակցի և կատարի Քրիստոսի վսեմ և բարձր խօսքը. «Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր և քոյր և մայր»:

Բաբգէն վարդապետ